լիս և բթացնում երեխայոց, նա չէ էլ բարեհաճում դասագրքի մութ և անհասկանալի խօսքերը ու բառերը բացատրել և պարզաբանել։ Թուաբանութեան ուսուցիչն էլ ստիպում է խեղճ երեխայոց Եւտուշևսկի դասագրքից խնդիրը բառ առ բառ արտագրել տետրակի վրա և յետոյ տակը խնդիրը լուծել.... Երևի, սա էլ նոր մեթոդա է.... Չեմ կարծում, որ թուաբանութեան պ. ուսուցիչը յանձն առած լինի թուաբանութեան դասերի հետ գեղագրութեան և վայելչագրութեան դասերն էլ աւանդել։ Ձեռագործութիւնը ևս մեր ուսումնարանում դանդաղ է առաջ գնում և այդ աւելի հոգաբարձութեան մեղն է, քան թէ վարժուհու, որովհետև վարժուհին տասը ձեռք պէտք է ունենայ, որ 90 աշակերտուհու հետ պարապէ, այն էլ օրական երկու ժամ։ Մինչև խեղճը մէկի կարը սկսէ և միւսի վատ գործածը քանդէ, օրը մթնում է, զանգը տալիս են և դասը վերջանում է։ Ձեռագործութեան վարժուհին չաբաթներով պարապ է թողնում երեխայոց, որովհետև չէ կարողանում հասցնել։ Ի՞նչու հոգաբարձութիւնը չէ հոգում այս մասին, միթէ նա չէ տեսնում այդ անկարգութիւնը, չէ լսում ծընողաց իրաւացի տրտունջը....

Զ.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վիէննայի թատրոնի հրդեհը, որտեղ սպանւել են 900 մարդ, այն աստիճան սարսափելի երևոյթ է որ մարդը ակամայ մտածում է թէ որքան զգոյշ պէտք է լինել այդ տեսակ մեծ ժողովարաններում, ինչպէս թատրոնները և ցիրկերը։ Լրագիրները հաղորդում են, որ Վիէննայի թատրոնի բոլոր դռները դէպի ներս էին բացվում և ոչ դէպի դուրս, այնպէս որ վտանգի ժամանակ ժողովուրդը անկարող էր փրկվել։ Մանաւանդ վտանգաւոր են այնպիսի շինութիւնները, ինչպէս ցիրկերը, որտեղ, ինչպէս օրինակ մեր Թիֆլիսի ցիրկում, ընդամենը մի դուռ կայ։ Դրա վրա մեր տեղային վարչութիւնը պէտք է ուշադրութիւն դարձնէր։ Երբ որ այդ տեսակ շինութեան մէջ վտանգ է յայտնվում, կամ միայն լուր է տարածվում թէ կրակ կայ, ժողովուրդը ելք չունենալով ցիրկից կամ թատրոնից, գազանաբար սկըսում է մին միւսին կոտորել։ Այդ տեսակ դիպուածներում ամենակրթված մարդը յայտնվում է որ ուրիշ բան չէ, եթէ ոչ մի գազան։ Մանաւանդ ցիրկը, որ փայտից է շինված և որտեղ հաւաքվում է հազար, երկու հազար հոգի, պէտք է ոչ թէ մէկ, այլ հինգ վեց լայն դռներ ունենար։

—

Ստացանք Կ. Պօլսից պ. Կարապետ Կիւլպէնկեանից 20 րուբլ պ. Քիւրքճեանին հասցնելու նրա Անիի աւերակների ժողովածուի համար։ Փողը կը հասցնենք հասցէի հետ միասին, որպէս զի ժողովածուն ուղարկվի ուր հարկն է։

—

Երէկ ուղարկեցինք Թիֆլիսի առևտրական բանկի միջոցով 400 րուբլ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրին։ Ուրեմն մեզ մօտ եղած 908 րուբլ 15 կոպ. գումարից մնում է այժմ 508 րուբլ 15 կոպէկ։

—

Մեզ խնդրում են յայտնել հետևեալը։ «Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը ծանուցանում է ի գիտութիւն հասարակութեան, որ ովքեր ուր ստորագրվել են ընկերութեան անդամ և դրամը վճարել են, այն տեղերից կարող են ստանալ կանօնաւոր անդորրագիր, իսկ որոնք նոյեմբերի 15-ին ընդհանուր ժողովի նստի ժամանակ ստորագրվել են պ. Գէորգ Հէջուբեանցի մօտ, նրանք կարող են անդորրագիր ստանալ պ. Ե. Ծատուրեանցի խանութում։ Խորհուրդը խնդրում է նոյնպէս, որ անդամները բարեհաճեն շուտով ստանալ անդորրագիրները, որպէս զի կարող լինեն նրանց ցոյց տալ ընդհանուր ժողովը մտնելու ժամանակ, որ տեղի կունենայ մի քանի օրից յետոյ։ Իսկ այսուհետև անդամակցութեան ստորագրութիւնը, անդորրագիրների հատուցմամբ, ընդունվում է 1. խորհրդի անդամների մօտ, այն է պ. պ. Անանովի, գեներալ Դ. Տէր-Ասատուրովի, Յ. Չիթախովի, Ա. Մանթաշեվի, Ն. Խօսրովեվի, Ա. Մէլիք-Ազարեանցի, Ն. Աթարբէգովի, Բ. Նաւասարդեանի և Գ. Սունդուկեանցի մօտ, 2. Կենտրոնական գրավաճառանոցում, 3. Կովկասեան գրավաճառանոցում, 4. Ե. Ծատուրեանցի խանութում, 5. Առևտրական բանկում և 6. փոխադարձ կրէդիտի վարչութիւնում։ Այս օրերս կը սկսվեն հրատարակվել ընկերութեան անդամների անունները։»

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՄԵՐԻԿԱ

—

Դեկտեմբերի 6-ին ամերիկական կօնգրեսի մէջ կարդացվեցաւ Միացեալ Նահանգների Նախագահ Արտերի հրովարտակը, որի առաջին խօսքերը երկրին պատահած դժբաղդութեան են վերաբերում։ Եթէ այդ ՀԸ լինէր, գործերի դրութիւնը կատարելապէս բաւականացուցիչ կը լինէր։ Ժողովրդական բարօրութիւնը արագ զարգանում է։ Միացեալ Նահանգների յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ շատ լաւ են։ Գարֆիլդի յիշատակը յաւիտեան կը մնայ ամերիկացիների սրտերի մէջ և այդ ծանր կորուստի պատճառով միւս ժողովրդների ստացած համակրութեան ապացոյցները գրաւական կը լինեն միջազգային հաստատ բարեկամութեան և մարդկութեան միաբանութեան համար։ Երբեք Միացեալ Նահանգների և Անգլիայի բարեկամական յարաբերութիւնները այդքան պարզ չեն երևացել, ինչպէս այդ դէպքում։ Եօրկտօունի մէջ անգլիական դրօշակին արած պատիւը շնորհակալութեան արգասիք էր Անգլիայի արտայայտած զգացմունքների համար։ Եօրկտօունի տօնին Ֆրանսիայի հաւատարմատարների ներկայութիւնը ամրացրեց Ամերիկայի բարեկամութիւնը այդ երկրի հետ։ Թէպէտ Փարիզի դրամական կօնֆերենցիան ցանկալի հետևանքներ չունեցաւ, բայց այնու ամենայնիւ նա շատ օգտաւէտ էր, որովհետև այդ առարկայի մասին մտքերի փոփոխութիւն կայացաւ։ Կօնֆերենցիան եկող տարի նորից կը սկսվի։ Փարիզի էլէկտրական հանդէսի ժամանակ ամերիկացիք աջողութիւն ունեցան։ Գերմանիայից լսվող գանգատները այն անձանց կողմից, որոնք ընդունել են ամերիկական հպատակութիւն, իրականապէս վերջացան այն ժամանակից, երբ գերմանական կառավարութիւնը համաձայնեց Միացեալ Նահանգների կառավարութեան հայեացքների հետ։ Ցանկալի է վերահաստատել բարեկամական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, ապահովելով այդ երկիրը այցելող ամերիկական խաղաղ ճանապարհորդների պաշտպանութիւնը, մանաւանդ հրէաների վիճակը, որոնց հետ վարմունքը առիթ տուեց Միացեալ Նահանգների կառավարութեանը մի քանի բողոքներ ներկայացնել։ Րումինիայի և Սերբիայի հետ դաշնագիրներ են կապված։ Կառավարութիւնը սրտանց ցանկանում է, որ դադարի պատերազմը Չիլի, Բօլիվիայի և Պերուի մէջ, որովհետև այդ պատերազմը վնասակար է Միացեալ Նահանգների շահերի համար և կորստաբեր խաղաղ և ազատ քաղաքակրթութեան համար։ Կառավարութիւնը, ի նկատի ունենալով, որ դիպլօմատիական յարաբերութիւնները մինիստր-տեղապահների միջնորդութեամբ վերջը անբաւականութիւններ են ծագեցնում, յիշեալ իւրաքանչիւր հանրապետութեանը առանձին հաւատարմատար ուղարկեց այնպիսի հրահանգներով, որոնք յոյս են տալիս խաղաղութեան վերականգնելու համար։ Նախագահը պնդում է, որ զօրքերի թիւը աւելացնվի 30,000 զինուորներով և վերանորոգվի նաւատորմը, որ անհրաժեշտ է Միացեալ Նահանգների շահերի, առևտրի և ժողովրդական պատուի պաշտպանութեան համար։ Նախագահը խորհուրդ է տալիս տեղացիների հետ յարաբերութիւններ ունենալու ժամանակ հետևել քաղաքակրթութեան սկզբունքներին։ Նախագահը իր հրովարտակը վերջացնում է հետևեալ խօսքերով. „Շատ լաւ հասկանալով այն պատասխանատուութիւնը, որ անսպասելի կերպով ինձ վրա դրվեցաւ, ես մշտապէս կաշխատեմ օգնել ձեզ այնպիսի միջոցներ գործադրել և այնպիսի կարգադրութիւններ անել, որոնց նպատակն է մեր հայրենիքի փառքը և մեր ժողովրդի օգուտը և բարօրութիւնը։“

Գիտօի դատաստանական գործի մասին դատարանի նիստերից մէկի ժամանակ յանցաւորին հարցրին. „դուք մտաւորապէս առո՞ղջ էք։“—Ես էկսպերտ չեմ, պատասխանեց Գիտօ, թող այդ հարցը էկսպերտները վճռեն։ Դատարանը կամենում էր անպատճառ Գիտօի կարծիքը իմանալ այդ հարցի մասին, բայց Գիտօ բարկացաւ և ոչինչ չը պատասխանեց։ Գիտօին հարցրին, արդեօք ճշմարիտ է, որ յուլիսի 1-ին գիշերով նա պահում էր Գարֆիլդի ճանապարհը։ Յանցաւորը նկարագրեց, թէ ինքը ինչ էր անում մինչև այն րօպէն, երբ հանգուցեալ Նախագահը և մինիստր Բլեն դուրս եկան վերջինի տանից։ „Նրանք գնում էին ձեռք ձեռքի տուած, միմեանց կպած, ինչպէս երկու ընկերուհի աշակերտուհիներ։ Շատ լաւ էր նրանց վրա նայել։ Այդ հանգամանքը աւելի էլ հաստատեց իմ համոզմունքը, որ Գարֆիլդ անձնատուր է եղել Բլենին։“ Այնուհետև հարցրին էկսպերտներին։ Նրանցից մէկը Գիտօին խելագար

---

—Աստուծոյ օգնութեամբ ապաւինել մենք պարտաւոր ենք, բայց պէտք է մտածել, որ մեր թշնամիներն էլ Աստուած ունեն։

—Նրանց առաջնորդում է սատանան, իսկ ճշմարիտ Աստուածը երեսը դարձնում է անհաւատներից։

—Երբեմն սատանան աւելի գործ է կատարում, ինչպէս այսօր։ Մեր առաջապահ զօրքերը բոլորը ջարդվեցան։

—Դրանով Աստուած կամեցաւ մի փոքրիկ խրատ տալ մեզ։

—Ի՞նչու չէք ասում՝ մի մեծ խրատ։

Տհաճութեան մռայլը դարձեալ անցաւ խանի սարսափելի դէմքի վրա և նա զայրացած կերպով պատասխանեց.

—Վէզիր, դու միշտ սովորութիւն ունէիր խրախուսել, սիրտ տալ ինձ, իսկ այսօր ի՞նչ է պատահել քեզ հետ. քո բոլոր խօսքերը յուսահատական են։

—Այսօր ես ցանկութիւն չունեմ ձեզ շողոքորթելու. եթէ խօսում եմ ճշմարտութիւնը, այդ առաջ է գալիս իմ դէպի ձեզ ունեցած հաւատարմութիւնից։

—Այդ հաւատարմութիւն չէ, վէզիր, դու ցանկանում ես անպատուութեամբ արատաւորել իմ սուրը, ասաց նա բաւական զգացված կերպով։— Լսիր իմ վերջին խօսքը. առանց Աստուծոյ կամքի ոչինչ չէ կատարվում. եթէ հասել է իմ իշխանութեան վախճանը, կը լինի այն, ինչ որ վճռել է Նախասահմանութիւնը։ Իսկ եթէ դեռ ես Ամենակալի աջը պիտի հովանաւորէ իմ իշխանութեանը, այն ժամանակ, եթէ երկնքի աստղերի թւով զօրքեր ևս գալու լինեն մեզ վրա, դարձեալ մեր գըլխից մի մազ անգամ չի պակսի։ Մենք պիտի ընդդիմանանք մինչև վերջին շունչը, կամ կպաշտենք մեր բերդը, կամ նա մեր գերեզմանը կը դառնայ...

—Վերջինը աւելի հաւանական է...

—Թո՛ղ այդպէս լինի։

Երկուսի մէջ ևս տիրեց մի խորհրդաւոր լռութիւն։ Դա վտանգաւոր հիւանդի և բժշկի մէջ տիրող լռութեան նմանութիւնն ունէր, երբ վերջինը սկսում է մտածել, թէ ինչ դարման պէտք էր տանել նրա ցաւերին։

—Դուք յայտնեցիք ձեր վերջին խօսքը, խան, ասաց վէզիրը ծանր կերպով,— բայց խիղճս հանգստացնելու համար, թոյլ տուեցէք ինձ ևս յայտնել իմ վերջին խօսքը։

Խանը ոչինչ չը պատասխանեց։ Վէզիրը շարունակեց.

—Ամբողջ Ղափանը ապստամբված է մեր դէմ։ Մենք կենում ենք շրջապատող կրակի և սրերի մէջ։ Հալիձորցի ծերունի Մէլիք-Փարսադանը, որ երկաթի սիրտ ունի, իսկ գայլի խիղճ, իր փեսայ տէր Աւետիքի հետ առաջնորդում են տեղային ապստամբներին։ Ամբողջ Գենուազը ապստամբված է. Կըղաստանցի Ստեփաննոս իշխանը, որ սատանայի խելք ունի և Րուստէմի քաջութիւն, Կալերցի Գապ զօրավարի հետ առաջնորդում են տեղային ապստամբներին։ Ամբողջ Զանգուրը ապստամբված է. Խորձորցի Թորոս իշխանը, որ փղի ուժ ունի և առիւծի սիրտ, իր ազգակից Մէլիք Նուբարի հետ առաջնորդում են տեղային ապըստամբներին։ Ամբողջ Սիսիանը ապստամբված է. Բայինդուրլեցի Բայինդուր իշխանը,— այդ սարսափելի հսկան, որ իզուր չը ստացաւ մեր Շահից «բաթման-դլիճ» անունը,— Ուժանիս գիւղացի վիթխարի տէր Կասպարի հետ, որ կոչվում է «աւշար երէց», առաջնորդում են տեղային ապստամբներին։ Դեռ չէ շարժվել միայն Բարգիւշատը, որովհետև Երիցվանից աւանի Մէլիք-Ֆրանգիւլը տակաւին պահպանում է իր բարեկամութիւնը Ֆաթալի-խանի հետ, և դեռ չէ անցել ապստամբների կողմը։

—Ես չեմ կամենում երկար խօսել մասնաւոր խումբերի մասին, որոնք զանազան կողմերում, այս և այն զօրավարի առաջնորդութեամբ ասպատակում են երկիրը։ Օրինակ, Բաղաբերդի Ադամ զօրավարը սարսափ մէջ է գցել իր բերդից սկըսած մինչև Սևանայ լիճը։ Գիւլ-բերդի Ղազար զօրավարի արշաւանքները տարածվում են մինչև Կուր և Երասխ գետերի խառնվելու տեղը։ Շիրվանաձորի Սարգիս զօրավարը տակնուվրա է անում ամբողջ Ագաջրանի վիճակը։ Ջուղայեցի Մաղայ-մէլիքի երկու որդիները՝ Աշոտ և Սմբատ բոլորովին կտրել են Գարսկաստանից դէպի Նախիջևան և Երևան տանող ճանապարհը, ասպատակում են Երնջակի կողմերի թիւրքաց գիւղերը։ Մեղրեցի մէլիք-Կոստանդինը մինչև անգամ համարձակվում է անցնել Երասխը և աւերել Քիւրդաշտի ամրութիւնները։ Տաթևացի Կիջի իշխանին՝ Այտի, Եսայի, տիրացու Սիմէօն տանուտէրների հետ՝ ամայի են դարձնում Մուղանը և վերին Սիսիանը։ Շնհէրի Մինաս և Ստեփան տանուտէրները հանգստութիւն չեն տալիս Ջանֆէզորի ամբողջ վիճակին։

—Հիմայ կասեմ, թէ ի՞նչ են անում այդ բարբարոսները, առաջ տարաւ ծերունի վէզիրը.— կոտորում են անողորմ կերպով, առանց խտրութիւն դնելու սեռի և հասակի։ Կնիկների փորերը պատռում են, և տղաներին դուրս հանելով, ցցում են իրանց նիզակների ծայրին։ Ծերունու ալիքը ներկում են իր արիւնով։ Գենուազի գաւառում ոչընչացրել են՝ Վահրաւարայ, Բաղաքար, Գոմերանց, Թօս, Թաղամէր, Աքիս (Ապկէս), Ջուար, Լիճք թիւրքաբնակ գիւղերը։ Լեհվազի ձորի բոլոր թիւրք բնակիչները ոչնչացրած են. մի փոքրիկ մասը միայն փախել է դէպի Օրդուար։ Ղափանի գաւառում բնաջինջ են արել Կաց և Քիս գիւղերը։ Բարգիւշատի գաւառում բնաջինջ են արել Ջափնիսը։ Սիսիանի կողմերում բնաջինջ են արել Քուրթլար աւանը և Աջբէջը։ Իսկ այդ բոլորը դեռ գործի սկիզբն է։

—Ամեն տեղ, ինչոր գտնում են, յափշտակում են։ Ջանդուրի Խուստուփ կոչված լեռների վրայից Թորոս իշխանը թալանել է տարել Ֆաթալի-խանի 2000 ոչխարները, սպանել են նրա 12 հովիւներին։ Մխիթար սպարապետը և տէր Աւետիքը, Ղազան-Գօլու կոչված լեռների վրա, կոտորել են թուրքմէնների մի քանի խաշնարած ցեղեր, թալանել են նրանցից 6300 ոչխար և 430 այլ անասուններ։ Կապբէլու լեռների վրա նրանք զարկեցին թուրքմէնների մի այլ ցեղ և թալանեցին 900 անասուններ։ Ալանգազի լեռների վրայից թալանել են Կաց աւանի Միրզայ-Սալիլ իշխանի գեղեցիկ նժոյգների երամակը։

Բացի խոշոր, պատերազմող գունդերից, բէկի մանր, աւազակային խումբերը, ցրված զանազան տեղերում, սարսափելի յափշտակութիւններ են գործում։ Կրճաւանի անտառներում բոյն է դրել վաղարշապատեցի Յարութիւն տանուտէրը իր խումբով։ Ուրոնայ անտառներում բոյն են դրել

